ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Ավետիսյան,

Ի պատասխան Ձեր 28.07.2025թ. գրության՝ Երվանդ Քոչարի փողոց h.15 հասցեի հարակից տարածքում առկա դիտահորի անհարթության վերաբերյալ, տեղեկացվում է.

2017 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման Վարձակալության պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում Ջրային կոմիտեն՝ որպես Վարձատու և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն՝ որպես Վարձակալ:

Ելնելով վերոգրյալից, տեղեկացվում է, որ խնդրի կարգավորումը գտնվում է Ջրային կոմիտեի, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և/կամ սեփականատերերի պատասխանատվության ներքո:

Այնուամենայնիվ, հարցի կարևորությունից ելնելով, Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից միջնորդագիր է ուղարկվել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ, խնդիրն ուսումնասիրելու և հնարավորության դեպքում կարգավորելու համար:

Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում դիտահորեր առկա չեն:

Երևանի քաղաքապետարան